



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-10-Ո-11
2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՅՈՒՄԱՅԻ ՄՈՎՍԵՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՔԸ ԼՐԱՆԱԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝

Ա. Սյրտումյանի

մասնակցությամբ ԱԽ անդամներ՝

*Ա. Բաբայանի, Գ. Բաղիրյանի,
Ռ. Բարսեղյանի, Ա. Դարբինյանի,
Գ. Խանդանյանի, Ա. Խաչատրյանի,
Մ. Հարթենյանի, Գ. Ղազինյանի,
Ս. Չիչոյանի, Ե. Սողոմոնյանի,
Վ. Ստեփանյանի, Հ. Փանոսյանի,
Ս. Օհանյանի*

քարտուղարությամբ՝

Գ. Նիկողոսյանի

2017 թվականի հուլիսի 19-ին քաղաք Երևանում՝ Արդարադատության խորհրդի նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Հարություն Սերյոժայի Մովսեսյանի լիազորությունները՝ պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ դադարեցնելու վերաբերյալ հարցը, և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով, 4-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց

Առաջարկել Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ 2017 թվականի օգոստոսի 3-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Հարություն Սերյոժայի Մովսեսյանի լիազորությունները՝ պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ: